## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին կազմավորված հայ հայրենակցական միությունները զգալի դեր խաղացին հայ ժողովրդի իրավունքների ու շահերի պաշտպանության գործում։ Հայ հայրենակցական միությունները, նրանց կենտրոնական խորհրդի նախագահ Հովհաննես Թումանյանի բնորոշմամբ, իրենց առաջ գրել էին երկու նպատակ. «Անդրկովկասյան ազգերի համերաշխությունը և հայ ժողովրդի ֆիզիկական ու կուլտուրական գոյության պաշտպանումը» (Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1959, էջ 416)։ Երկու ուղղությամբ էլ հայ հայրենակցական միությունների աշխատանքներին շունչ ու եռանդ հաղորդողը հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանն էր։ Դեռևս դարի սկզբին, Անդրկովկասում ազգամիջյան հարաբերությունների խիստ սրման օրերին, Թումանյանը հանդիսացավ անդրկովկասյան այն գործիչներից մեկը, որը ոչ միայն խոսքով, այլև պրակտիկ գործունեությամբ զգալի չափով նպաստեց ազգամիջյան զինված ընդհարումների կասեցմանը։

Հովհ. Թումանյանի հայրենասիրական ու մարդասիրական գործունեությունը ծավալվեց հատկապես առաջին համաշխարհային պատերազմի ավարտին, հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նախագահի պաշտոնում։ Այդ ժամանակաշրջանում մեծ բանաստեղծը արեց ամեն ինչ, որպեսզի արգելակվեն Անդրկովկասում թուրքական կանոնավոր զորամասերի կողմից հայկական կոտորածները, հայ բնակչության գույքի և ունեցվածքի թալանը։ Տեղերից ստացված զեկուցագրերի հիման վրա, Հովհ. Թումանյանի կողմից 1918 թ. դեկտեմբերի 19-ին կազմվել է Անդրկովկասի հայ բնակչության աղետալի վիճակն արտացոլող մի ամբողջական փաստաթուղթ (փաստաթղթի միկրոժապավենը ՀՍՍՀ ՊԿՊԱ է տրամադրել ԱՄՆ-ի Կալիֆորնիայի համալսարանի պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը. ռուսերեն և անգլերեն բնագիրը տե՛ս The National Archives of the United States. Record Group 84: Փաստաթուղթը առանց Հ. Թումանյանի ստորագրության, կրճատումներով լույս է տեսել «Геноцид армян в Османской империи» (Сборник документов и материалов под ред. М. Г. Нерсисяна. Второе, дополненное издание, Ереван, 1982, док. 252, с. 534—540) գրքում), որը նրա և հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի քարտուղար Հ. Համբարձումյանի ստորագրություններով ուղարկվել է Անդրկովկասում դաշնակից տերությունների ներկայացուցիչներին։ Փաստաթղթում ճշգրտորեն ներկայացվում են Կարսի մարզում, Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ գավառներում հայ բնակչության կրած մարդկային ու նյութական կորուստների չափերը, որոնց հատուցման ողջ պարտավորությունը ընկնում է թուրքական կառավարության ու Անդրկովկասում բացարձակ թրքամետ քաղաքականություն վարող մուսավաթական կուսակցության վրա։ Հակիրճ ձևով ծանոթանանք այդ կարևոր փաստաթղթի հետ։

**Կարսի մարզ.**—Թումանյանի հաղորդմամբ մարզի չորս գավառներից Արդահանի և Օլթիի հայ բնակչությունը գլխովին ոչնչացվեց թուրքերի կողմից Սարիղամիշի ռազմաճակատի ճեղքումից անմիջապես հետո, բացառությամբ մոտ հազար կանանց ու աղջիկների, որոնք հետագայում Արդահանից բաց թողնվեցին՝ «ծեծված, բռնաբարված, հոշոտված», հարևան Ախալքալաքի գավառ։ Մյուս երկու գավառների՝ Կարսի և Կաղզվանի հայությունը հասցրեց փախչել Կարս, իսկ վերջինիս հանձնումից հետո շարժվեց Ալեքսանդրապոլի ուղղությամբ, լիովին թալանվեց թուրքերի կողմից Կարայազ կայարանի մոտ, ապա մեծամասնությունը ոչնչացվեց Մ. Ղարաքիլիսայի ճանապարհին։

**Ալեքսանդրապոլ և գավառ.**—Զեկուցագրում ասված է, որ այստեղ թուրքական կանոնավոր զորամասերը, տեղի մահմեդական բնակչության հետ, օգտվելով իրենց հանկարծակի ներխուժումից առաջացած բնակչության տագնապից՝ հրի ու սրի մատնեցին քաղաքն ու ողջ գավառը, տարածեցին աննկարագրելի սարսափներ. «Изнасилование женщин и растление детей,

массовое методическое истребление мужчин с подразделением их на категории, расстрел привязанных друг к другу сотнями мирных обывателей... Колодцы, ямы, овраги, реки полны и по сей день разложившимися трупами убитых». *Գավառից մոտ 10 հազար երիտասարդ տղամարդիկ քշվեցին դեպի երկրում, ուր ոչնչացավ նրանց մեծ մասը և քչերին հաջողվեց հետ վերադառնալ։ Գավառում բռնաբարվել ու հափշտակվել են մոտ 5000 կանայք և աղջիկներ, որոնցից շատերը մահամեղականացան, չտանելով ամոթանքն ու գազանությունները։ Իլլի-Ղարաքիլիսա գյուղում 1500 մարդուց կենդանի մնաց միայն 200-ը։*

Ախալքալաքի գավառ.—*Այստեղ մնացած բնակչությանը, բացառությամբ հայ կաթոլիկների, թուրքերը գլխովին ոչնչացրին։ Գավառի բնակչության հիմնական մասը՝ մոտ 85 հազար հայեր, ապաստանեցին Բակուրիանիում ու Ծալկայում։ Սակայն միայն 5 ամսվա ընթացքում ցրտից, քաղցից ու հիվանդություններից մեռավ մոտ 40 հազար մարդ։ Գանձա գյուղի 2060 մարդուց Ծալկայում մեռան մոտ 720-ը։ Սատկայի 3250 հոգուց մահացան մոտ 2500-ը։ Հ. Թումանյանի հաղորդմամբ, այդ քաղցած մասսան իր գավառում էր թողել 2,5 մլն. փութ հացահատիկ, մոտ 8 մլն. փութ բերք, 15 հազար փեթակ, մեծ թվով գյուղատնտեսական գործիքներ ու մթերքներ, եկեղեցական գույք, հին ձեռագրեր և այլն։ Գաղթականների թողած ողջ գույքը վերավաճառվեց տարբեր ազգերի սպեկուլյանտներին, իսկ քշված անասուններին տարան Ախալքալաք և Ախալցխա՝ թուրքական բարձրագույն հրամանատարության տրամադրության տակ։*

Փամբակի շրջան.—*Թումանյանի վկայությամբ, Փամբակի 28 հայկական գյուղերից կանգուն էր մնացել միայն Համզաչիմանը, մնացած 27 գյուղերը, ենթարկվելով թուրքական հարձակումներին, հիմնովին ավերվեցին։ Համաձայն նրա հաղորդման* «турки своих жертв заставляли рыть могилы для себя и зарывали их живыми. В селении Кишлаг перебито около 250 человек, в Парни—150 человек, Безобдале—200, и т. д. Уведены тысячи женщин и девушек в плен, ограблено все имущество Бамбакских сел».

tions between us and our neighbors—the Mohammedan working population.

Eighth. Pending the final political establishment of our country at the coming Peace Conference to let us have in the shortest possible time the necessary material means—in the shape of money, provisions and agricultural utensils—for the restoration of our agricultural industry, without which the degeneration of our people will continue, though it be by peaceful means.

The Central Council of Armenian Land Associations has taken upon itself the pleasant duty of bringing the above to the attention of the Allied representatives, and is fully confident that a decision will ensue regarding the matters which have been brought up in a way which will be thoroughly in harmony with the best interests of the Armenian People. This is indeed dictated by the very conception of justice, culture and the necessity of the restoration of right which has been trampled upon, which the Allied Powers have been so consistently following and upholding right up to the present day.

President of the Central Council
of Armenian Land Alliances.

Secretary of the Council.

Tiflis , 1919.

No. 61

**Լոռու շրջան.**—*Ինչպես հայտնում է Հ. Թումանյանը, այս շրջանում ևս եղան մարդկային զոհեր, սակայն դրանք նախորդների նման մասսայական բնույթ չստացան։ Բայց ահռելի չափերի հասան շրջանի նյութական կորուստները։ Թուրքերի կողմից թալանվեցին շրջանի տնտեսությունները, անասունները, հացահատիկը, տարվեց այն ամենը, ինչ որևէ արժեք էր ներկայացնում՝ դռները, լուսամուտների շրջանակները և այլն։*

Նոր Բայազետի շրջան.—*Քիչ չէին կորուստները նաև համեմատաբար պակաս տուժած շրջաններում։ Թուրք սպաների և թաթարական ավազակախմբերի կողմից միայն Կիրխբուլաղ, Թուսկուլու և Ջագալու գյուղերում ոչնչացվեցին մի քանի հարյուր տնտեսություն, հափշտակվեց մոտ մեկ միլիոն եղջերավոր անասուն։*

Ղարաբաղ և Զանգեզուր.—*Ղարաբաղը և Զանգեզուրը կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ զերծ մնացին կոտորածներից։* «Карабах, обнимавший Дживаншпрский, Шушинский и Карягинский уезды и Зангезурский уезд с двухсоттысячным армянским населением, не желая войти в состав Азербайджана, стать объектом действий турецко-татарских войск и банд, до самых последних времен отстаивал себя». *Սակայն Բաքուն գրավելուց հետո հինգ հազարանոց թուրքական ջոկատը, շարժվելով դեպի Ղարաբաղ, իր ճանապարհին ոչնչացրեց մի շարք հայկական բնակավայրեր։ Թուրքերը, Շուշին գրավելուն պես, պահանջեցին հայ բնակչության զինաթափում, այն դեպքում, երբ նրանց կողքին էին գտնվում մինչև ատամները զինված թաթարական ավազակախմբերը։ Բոլոր կողմերից շրջապատված Ղարաբաղի հայ բնակչությունը ստիպված էր պայքարել նաև սովի դեմ։* «Турецкие войска стремятся ворваться внутрь этого края через Зангезурский уезд, также осажденный ими, но защищаемый отрядом генерала Андраника, ведущим с самого начала войны неравную борьбу с турко-татарами».

Ելիզավետպոլ.—*Դեռ 1917 թ. դեկտեմբերից սկսված հայկական կոտորածները աստիճանաբար ընդունեցին սիստեմատիկ բնույթ և, ի վերջո, ինչպես քաղաքը, այնպես էլ ողջ շրջանը պաշարվեցին թուրք սպաների ղեկավարությամբ գործող ջոկատներով։ Ութ ամիս մի քանի տասնյակ հազար մարդ գտնվում էին պաշարողական վիճակում։ Թալանվել ու յուրացվել է հայերի բազմամիլիոնանոց ողջ գույքը։*

Շամախի և Գյոկչա.—*Շամախիում և գավառում հայկական ու ռուսական կոտորածները սկսվեցին դեռևս մարտին, երբ թուրքական էմիսարների հրամանատարությամբ գործող թաթարական ավազակախմբերը, հարձակվելով գորանոցների վրա, զինաթափեցին ու ոչնչացրին ռուս և հայ զինվորներին։ Սկսված կոտորածից փրկվելու համար բնակչությունը փորձեց փախչել Բաքու, բայց մասամբ ոչնչացվեց ճանապարհին, իսկ մյուս մասը՝ Բաքվում ենթարկվեց սպանդի։ Շամախու և Գյոկչայի բոլոր հայկական գյուղերը հողին հավասարեցվեցին։*

Նուխու և Արեշի գավառ.—*Դեռ 1918 թ. փետրվարին ոչնչացվեցին այս գավառների 16 գյուղեր, իսկ արդեն հունիսի վերջին Արեշի և Նուխու գավառների 52 հայաբնակ գյուղերից ժամանակավոր մնացել էին առաջինում՝ Բեյուկ-Սոգուտլի, Բելա-Սոգուտլի, Խոշկաշեն, Ջիրիկ, իսկ երկրորդում՝ Վարդաշեն, Նիջ, Ճալուտ, Ջալու և Միրզա-Բեկլի հայկական գյուղերը։ 52 գյուղերի ողջ շարժական գույքը բռնագրավվեց, իսկ դատարկված գյուղերը բնակեցվեցին լեզգիներով։ Այս գավառներում ոչնչացվեց մոտ 40 հազար հայ, իսկ նյութական կորուստները հաշվվում են հարյուր միլիոններով։*

Օրդուբադ-Ագուլիսի շրջան.—*Դեպի Ջուլֆա շարժվող թուրքական զորամասերը ճանապարհին հիմնովին ոչնչացրին հայկական Ազա գյուղը։ Նույն բախտին արժանացավ նաև Քաղաքիկ գյուղը, ուր սպանվեց հարյուրից ոչ պակաս մարդ։ Թալանվեցին Տանակերտ, Բարակա, Բիստ, Ցղնա, Ռամիս գյուղերը, որոնց թուրք հրամանատար Խալիլ բեյը սպառնում էր Աղայի օրինակով։*

*Հով. Թումանյանը փաստաթղթում ներկայացնելով Անդրկովկասում հայկական կոտորածների ամբողջական պատկերը, դաշնակից տերությունների ներկայացուցիչներին է հղում հայ հայրենակցական միությունների հետևյալ պահանջները.*

*Первое.* Мы просим немедленно же освободить нашу родину от воинских частей Оттоманского правительства и явных и тайных агентов последнего, продолжающих свое злое дело сеяния раздоров и смуты между нами и вековыми нашими [соседями]—трудовыми мусульманскими массами, пользуясь темнотой последних.

*Второе.* Принять действенные меры к срочному и безболезненному возвращению беженцев в родные места.

*Третье.* Принять экстренные меры к тому, чтобы отходящие турецкие войска и мусульманские банды не увозили с собой и не уничтожали наше уцелевшее имущество.

*Четвертое.* Принять меры к тому, чтобы немедленно был наложен арест на имущество наше, вывезенное где-бы оно не находилось—на станциях ли железных дорог, пристанях ли и других путях в Турцию и, в частности, установить охрану по Эрзрумскому шоссе и на Батумской линии для прекращения открытого разбоя.

*Пятое.* Предложить турецкому командованию и местным татарам, действующим под руководством последнего, снять осаду Карабаха (Елизаветпольской губ.), если такое еще продолжается, освободить беженцев Геокчайского и Шемахинского уезда, запертых в лесах, и беженцев Нухинского и Арешского уездов, осажденных в горах и лесных дебрях.

*Шестое.* Установить по Закавказью свободу передвижения и обеспечить безопасность жизни и имущества также и армян при их передвижении.

*Седьмое.* Установить порядок, которым было-бы устранено влияние и давление турок и их агентов при решении внутренних вопросов между нами и соседними нам мусульманскими трудовыми массами.

*Восьмое.* До окончательного политического устроения нашей родины на предстоящем всемирном конгрессе не отказать весьма срочно отпустить достаточные материальные средства—деньгами, продовольствием и земледельческими орудиями, для восстановления нашего трудового хозяйства, без чего истребление нашего народа будет продолжаться и далее, но только уже мирным путем.

*Այսպիսով, այս փաստաթուղթը նորից վկայում է այն մասին, թե ինչպիսի անձնվեր, հայրենասիրական գործունեություն է ծավալել Հով. Թումանյանը Հայ ժողովրդի պատմության ամենածանր շրջաններից մեկում՝ 1918—1919 թթ.։*

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ